

մեզս աշխարհի, գսիրելիս քեզ միս, հաւուք
հանդերձ որք թուլցեալք յօղս» : Աւելի
յայտնի կը խօսի «Սակս ժողովոց» գրու-
թիւնը, թէ «Այս աւուր յարութեան ճա-
շակի գառն զնկնայ» (Թղթ. 229), որ է
մատաղ եղած (աստ, 312) : Բայց ժԱ. դա-
րու սկիզբն ուրիշ բան կը յիշուի Տարօ-
նացւոյն կողմանէ. հոն գառն արդէն մեծ-
ցած՝ ոչխարի փոխուած է : Մեր զատկի
մատաղը, կ'ըսէ նա, «յոյխարաց անուամբ»
(Թէոփ. 278) : Վերջինս հրէականէն էր,
որոնք զատկին «տարեւոր ոչխար» մը
կ'ուտէին (Եւք, ԺԲ, 3-5). եւ որոյ հետ
աւելի կատարեալ նմանութիւն մը ցոյց կու
տայ սուտն Գամասկացի, ըսելով թէ Հայք
եւս Հրէից պէս «տարեւոր գառամբ» կը
տօնեն զատկը (Լոյս, 1905, էջ 1114) :
Սակայն Տարօնացիէն կէս դար վերջ տա-
րեւորը վերստին փոքրկացած կը գտնենք
Շնորհալուոյն մէկ վկայութեան մէջ՝ թէ
Հայոց այդ գառնը կը լինէր «ամօրեայ
կամ որպէս պատահէ աւելի կամ նուազ»
(Ընդհ. 155) : Եւ յաջորդաբար կը հաս-
տատեն այս «գառն» Ալաւկայ որդին (ՂԱ),
Որբելեանը (ՀԿՃ. Է) եւ Տաթեւացին (Հրց.
657) :

Գալով գառին ծագման, Ալաւկայ որ-
դին «հրաման առաքելական» կը համարի